

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարեկանը 6 ռուբլի:
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
Կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խաբաբայիւր բառին 2 կոպեկ:

ԵԿՈՂ 1889 ԹԻՒՆ

„ՄՇԱԿ“

ԴՐԱՎԱՆԵՐՆԵՐ ԵՒ ՔՆՆԱՔԱՆԵՐ ԼՐԱԳԻՐ

Կը հրատարակվի Թիֆլիսում, նոյն դիրքով և նոյն պարագրաֆով: Մենք կը ստանանք սեփական չեմոն-գրքերը:
«ՄՇԱԿ» տարեկան գինը 10 ռուբլի է, կից ամսական 6 ռուբլի:
Դրովը «ՄՇԱԿ» կարելի է խմբագրատան և խաբաբայի փողոցների անկիւնում թանկագին անձինքը:
Կայտարարութեան ուրիշ քաղաքներէն «ՄՇԱԿ» գրվելու համար պէտք է դիմել հետևեալ հասցեով. ТИФЛИСЪ, Редакция газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK».

Խմբագիր-հրատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱՆՈՒԹԻՒՆ

Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հայոց դրամատիկական ակումբը. Անամոթութեան մի նոր ապացոյց. Բաթումի տեղական նախագահը. Ներքին լուրեր. —ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Քաղաքական նոր քարտէշ. Արտաքին լուրեր. —ԽԱՆԻ ԼՈՒՐԵՐ. —ՀԵՆՈՒ ԳԻՐԳՈՐ. —ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. —ՅԵՆՈՒՆՏՈՆ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ԴՐԱՄԱՏԻԿԱՆ ԱԿՈՒՄԲԸ

Ան հինգերորդ տարին լրանում է այն օրից, երբ մեր ըստ երևոյթին երբեմն ծաղկեալ հայոց թատրոնի յիշատակներովն ենք ապրում: Ձը նախելով որ հայ թատրոնի այդ ծաղկման և ընկնելու ժամանակից Թիֆլիսի մի քանի հայ տիկիններին կողմից փորձեր եղան թատերասերներին խմբեր կազմել և ներկայացումներ տալ բարեբաղորդական զանազան նպատակներով, չը նայելով որ հայ բեմի գաղափարին անկեղծ նուիրված Գ. Չմշկեանի շուրջը հաւաքելով մի քանի երիտասարդներ ջանում էր հայ դերասանների մի մշտական խումբ ունենալ, —բայց թէ առա-

ջինների և թէ վերջինների ջանքերը ապագային անցան, հանդիպելով հասարակութեան սառն անտարբերութեանը: Ձեռք խօսում, ի հարկէ, հայոց դերասանական խմբի այն ողորմելի մնացորդների մասին, որոնք մի քանի ռուբլի վաստակ ունենալու համար, Թիֆլիսի զանազան այգիներում ամօթալի ներկայացումներ տալով, խայտառակում էին թէ հայոց թատրոնի անունը և թէ վնասում էին գործին:

Հայոց թատրոնական գործը ամբողջ հինգ տարեկան ընթացքում այնպիսի հոգեաւոր դրութեան մէջ մնալով, չէր կարող ի հարկէ, ցաւ չը պատճառել հայոց բեմի նախանձախնդիրներին սրտին այն ժամանակ, երբ մի կողմից մեր հաւաքածու Լուսինայի. համարեա առանց ոչինչ միջոցների, բաւական արդողութեամբ տանում են թատրոնական գործը և շաքարակաւ մի անգամ գոնէ վրաց լեզուով ներկայացումներ են տալիս: Նեն թէ դրամատիկական խումբ և թէ օպերա, իսկ պ. Ն. Թիֆլիսի, ասում են, օգուտ քաղելով 1883 թվին հրատարակված «Հայոց դրամատիկական ակումբի կանոնագրի», հիմնեց նորիս հաստատված արտիստիկական կլուբը, որի ներկայացումներին և երեկոյթներին մեծ բազմութիւն

է յաճախում,—հայերը, որոնք Թիֆլիսի ազգաբնակչութեան մեծամասնութիւնն են. կազմում, չունեն ոչ հայ թատրոն և ոչ հայ բեմ:

Հայերին պատու չը բերող և ամօթալի այդ հանգամանքները աչքի առաջ ունենալով մի կողմից, իսկ հայ թատրոնական բեմ ունենալու պահանջը միւս կողմից, վերջապէս հայ թատերագործ Գ. Սունդուկեանցի 25-ամեայ զբաղմունքական գործունէութեան յօրեխանի կատարումը այնպիսի զօրեղ զորիչներ եղան, որ վերջապէս, ինչպէս լսում ենք, «Հայոց դրամատիկական ակումբի» անդամները, դարձնելով իրանց հնգամեայ խոր քննի, և դադարելով Պլոսի վրա որպէս աւետեաց երկրի վրա նայելուց, դիմելու են այժմ հայ հասարակութեան օգնութեանը, լաւ հասկանալով վերջապէս, որ առանց հայ հասարակութեան բարոյական և նիւթական գործակցութեան, յոյս դնելով միմյան իրանց տկար ոյժի և կարողութեան վրա, անպտուղ և անաշուղ կը լինի հասարակական խաբաբայիւր գործ:

Վաղուց արդէն թէ լրագրութեան մէջ և թէ մասնաւոր անհատներին կողմից զանազաններ են լսվում այն բանի մասին, թէ մեզանում չըջանալ չը կան, ընկերակցութիւններ չը կան, վերջապէս չը կայ մի կենդանի, ուր զարգացած, ինտելիգենտ և բարոյական զուարճութիւնների ծաւալման հանդիպելի միմեանց, չիվելին միմեանց հետ, խօսակցելին, մի խօսքով ազատ ժամանակը ինտելիգենտ մարդուն պատշաճ կերպով անցկացնելին: Ամենքին յայտնի է, որ բանիմաց մարդկանց այդպիսի պահանջներին չեն կարող բաւարարութիւն տալ մեր կլուբները, ուր մարդիկ հաւաքվում են միայն կանաչ դաշտի վրա պատերազմելու, կամ իրանց բուն առեւտրական գործերի վրա խօսակցելու, կամ պատճառաւոր անգամներ անելու համար: Իսկ կլուբների անդամներին ընտանիքները հօ բողբոլի մոռացված են, եթէ չը հաշուեք շաքարով մի անգամ այն ողորմելի երեկոյթները, որոնք «Վեմշին» վե՛ջը անունն են կրում, և ուր հաւաքվում են մի քանի տասնեակ կանայք և օրիորդներ՝ և նոյնքան էլ տղամարդիկ և միմեանց վրա նայելով յօրանջում են:

Այդ հանգամանքները աչքի առաջ ունենալով,

մեր ուսումնասիր և բանիմաց դասակարգի մէջ բնականապէս պէտք է դարձնել մեր վերև յիշած կենտրոնի նման մի տեղ ունենալու պահանջը, և այդպէս էլ եղաւ: Մի քանի անձանց նախաձեռնութեամբ 1883 թվին, ուրեմն ուղիղ հինգ տարի առաջ, առաջարկեց կատարութեան հաստատութեանը մի կանոնագիր, որը կրում էր «Հայոց դրամատիկական ակումբի կանոնագիրը» անունը: Այդ ակումբի թէ նպատակը, որ է՝ «օժանդակել տաղանդների ծաղկմանը և զարգացմանը բեմական արուեստների շրջանում, և ծանօթացնել հայ հասարակութիւնը առաջ և օժանդակել հեղինակների դրամատիկական ընտիր գրութեանը, նմանապէս իր անդամներին ու նրանց ընտանիքներին միջոց տալ ժամանակ անցկացնելու» յարմարութեամբ, զուարճութեամբ և օգտակարութեամբ, և թէ վերոյիշեալ նպատակներին հասնելու համար ակումբի ունեցած իրաւունքները,—«առ. ձեռք բերել որպէս սեփականութիւն բեմական ամենատեսակ պարագաները. վարձել շինութիւններ և մասնաւոր անձանց վարձով տալ նոյն նպատակի համար. գ. մրցանակներ նշանակել դրամատիկական ընտիր գրութեանը և թարգմանութիւնների համար հայերէն լեզուով. դ. ըստ պահանջման բանալ Թիֆլիսում թատրոնական դասարաններ և ժամանակաւոր դասընթացներ հմուտ դերասաններ պատրաստելու համար և ե. իրանց շէնքի մէջ կամ թատրոնական շինութիւններում տալ հայերէն ներկայացումներ, նմանապէս և բեմական առաւօտներ և երեկոյթներ», —այնքան նպատակայարմար և գեղեցիկ են, որ մարդ չուարժվում է և ակամայ հարց է առաջարկում թէ ինչ էին անում այս հինգ տարեկան ընթացքում այն դիվանման մարդիկ. ոտնա մի զեղեցիկ կանոնագիր կազմելուց յետոյ, ձեռքերը ծալած նայում էին իրանց դրամականական այդ արտադրութեան վրա:

Այսպէս թէ այնպէս, ուրախալ է, որ վերջապէս մեր «Դրամատիկական ակումբի» անդամները, կամենալով ուղղել իրանց աններելի սխալը, նոր եռանդով կամենում են ձեռք գարկել հայ թատրոնական բեմ ունենալու գործին, և դրանց այդ նպատակին, մենք համոզված ենք, որ կը համակրէ և կօժանդակէ հայ հասարակութիւնը:

էր, ինչ էր... ասում եմ ձեզ ֆաէտօնի ջուր... —Ախար բոխի, ի սէր Աստուծոյ, ֆաէտօնի ջուրը օրն է... —Ախ... ներքեցէ, ես սխալվեցի... ես ուզում էի ասել՝ սա մօլաբի ջուր:

Աւետիա Արաբաբեանց, մինչև որ օրիորդ «Մուրճը» աշուղութեամբ կը պատկերէր, ուզում է զերծ պահել նրա կուսուղիւնը... իր հայհոյանքներից: Բայց նոյն Արաբաբեանց շատ բնական է համարում չը ինչպիսի «Արձագանքի» պատկեր և շարունակ լցնել նրա էջերը այն հայհոյանքներով, որոնք կը խախտէին «Մուրճի» կուսութիւնը:

Լաւ կարծիք ունի պարոնը այն թերթի մասին, որին առ այժմ աշխատակցում է:

Արգար Գովհաննիսեան, զգալով «Արձագանքի» մօտեցող անխուսափելի մահը, և դիտենալով որ այնուհետեւ այլ ևս իրան երեք շաբաթը չը խմբագրի կոչումը կրելու,—առաջուց աշխատում է իր համար մի որ և է պաշտօն պատրաստել մի այլ լրագրի խմբագրութեան մէջ: Այս նպատակով նա սկսում է քրքրել «Մշակի» տան և վեց տարեկան հին համարներին խաբաբայիւր յօդուածը, իւրաքանչիւր լուրը, խաբաբայիւր տողը և բառը, որպէս զի յոյս ունենայ «Մշակի» խմբագրութեան մէջ լաւ ռոճիկով հրակրկիւլ հմուտ և իր գործին տեղեակ արիւնքի պաշտօնի պաշտօնով:

Ֆրանսիայի բոլոր ժողովրդական տօնավաճառները, ինչ էր հասկանում... տէր Աստուած, միթէ ամենահասարակ բաներ չէք հասկանում... խնդիր:

Ճ Ե Լ Ի Ե Տ Օ Ն

ԳՐԶԻ ՀԱՆԱՔՆԵՐ

Մի ամբողջ շաբաթվա ընթացքում գրիւս արձանագրում էր թղթի ջուլ ջուլ փոքրիկ կտորներին վրա միմեանցից անկապ հանաքներ:

Այժմ այդ բոլոր կտորները միացրել եմ եւ թէ և այդ բոլոր հանաքները միմեանցից անկապ են, բայց նոյն իսկ միմեանցից անկապ լինելով, հաւատարմութեամբ են ներկայացնում մեր անկապ կեանքը:

Ահա ներկայացնում եմ ընթերցողին գրիւս անկապ հանաքները:

Եթէ ոչ հին ժամանակներում, ոչ էլ վերջին տարիներում Թիֆլիսը երբեք ծաղկած դրութեան մէջ չէր, եթէ մեր քաղաքային վարիչները չը կարողացան մինչև այժմ հասցնել մեր քաղաքը ծաղկած դրութեան,—գոնէ այժմ կարելի է իրաւամբ ասել որ այս ձեռք ինքն ընտելանը պակասը լրացրել է և իրաւ ծաղկած դրութեան է հասցրել մեր քաղաքը... քանի որ այժմ ամբողջ Թիֆլիսում տիրում է... ծաղկելը:

Կեանքը և փորձը մարդուն փրկաօրէն են դարձնում և այն էլ, մեծ մասամբ, մարդատեալ փրկաօրէն:

Այդպէս էլ պատահել է Ղազարոս Աղայեանցի հետ: Գուցէ ոչ մի մարդ այնքան չէ փորձվել, այնքան դառն փորձառութիւն չէ ունեցել թէ կեանքի մէջ, և թէ «Փորձ» ամսագրի խմբագրութեան մէջ, որքան մեր այդ ժողովրդական գրողը: Եւ ահա նա հասկացել է այժմ, որ երբ մարդու սիրտը վիրաւորված է մտերմ բարեկամներից, երբ մարդը դադարած է իր բարեկամներից, նա վերջի վերջոյ դառնում է իր հոգու կատարեալ անզորութիւնը միմյան իր թըշնամու գրիւս:

Եւրօպացի մի շատ գովելի սովորութիւն ունեն. նրանք տալիս են առօրեայ կեանքի մէջ գործածական այս կամ այն առարկաներին իրանց երեկելի մարդկանց անունները, օրինակ՝ գեղեցիկ կերպասի այս ինչ գլխին տալիս են Բիսմարկի անունը, առանց լուցկիի վառող մի փոքրիկ գործիքին տալիս են Սադիկ-Կարնի անունը, վիշնացիք իրանց մի համեղ կերակրի յատկացրել են Ֆրանց-Յոզէֆի անունը, և այլն...:

Այժմ Թիֆլիսի հայերն էլ այն աստիճան քաղաքակրթվել են, որ սկսել են հետեւել եւրօպացիների օրինակին: Այժմ Թիֆլիսի թղթավաճառ կարող էք տեսնել գեղեցիկ կազմված, ճիշդ, կանոնաւոր և անխաբախ հաշվապահութեան համար յարմարեցրած նոր ձևի հաշվառմաններ, որոնք անուանվում են՝ մատեաններ «Գէորգ Ա» փրկանքով:

տէր թէ ինչքան զեղծութիւններ կարող են կատարուիլ նաւթի մասին տուրքի քանակութեան որոշման մէջ. միթէ ճշգրտութեամբ կը վճարուի քաղաքին աշխատողներին արդիւնքի համար, որչափ իրօք կը փոխադրուի խողովակից. բայց այս դեռ երկրորդական կէտ է: Մտածեցէք մի անգամ թէ որքան բանուոր, որքան արհեստագործ, որքան ծառայողներ, և ուրիշ գործարարներ վերաբերեալ մեծ և փոքր պաշտօնականներ—են պարագայով թիթեղեայ տուփեր պատրաստելու, փայտէ մետաղներ չինելու, լեցնելու, կնքելու, փոխադրելու և նաև բառնալու համար: Մտածեցէք, որ սրանք բոլորն էլ ընկալուած են Բաթումում, ապրում են Բաթումում և իրանց շահած ստակի մեծ մասը այստեղ են թողնում: Մտածեցէք որ Բաթումի մօտ 25,000 հոգուց բաղկացած ընկերներն մի նըշանաւոր մասը առանձնապէս զբաղւած է տեղիս գործարարներու մետաղի և տակառի պատրաստութեամբ և արտահանութեամբ: Եթէ այսօր ընկերարանները, չը նայելով նրանց որ ըստ օրէ գլխի կերպով աճելու հարձակ լաւ վարձ են տալիս, պատճառը նախկին արտահանութեան գործի յաջող հանգամանքն է: Եթէ քաղաքային արկղը իր եկամուտը այսօր հարկէ հազարներով է հաշուում մեծ պատճառն այդ է: Եթէ այսօր կենսական կամ այլ պիտոյքների վերաբերեալ խանութներ, ճաշարաններ և այլն այնքան յաջողութիւն են գտնում և ապրանք, պատճառը դարձեալ այդ է և այլն և այլն: Փոխեցէք յանկարծ իրաց կերպարանքը և ինչ կը ստանաք: Վազօն ցիտեմներին նախկին արդիւնքը կը պարզվի ընդհանրապէս: Կուգան բազմաթիւ նախկին բերձ նաւեր, կը մօտենան նաւահանգստին մը: Բայց դէմքերով, Բոլշոյի կամ մի այլ օտարազգու գործարանի ընդհանրապէս պէտքով կամ այլ նախկին արդիւնքը կը լցվին նաւերում, խողովակների միջոցով, և նաւերը կը հանեն խաբիսները ծովից և կը հեռանան քաղաքից, այնքան միայն օգուտ տալով քաղաքին և արդարապէս կոթիւն, որքան կը տար մի ապրանք, որ քաղաքից տրանսպորտ է անցնում:

Արժէք, որ այս կենսական հարցն աւելի ուշադրութիւն գրաւէ և ցանկալի էր, որ մեր նորածին ինքնավարութիւնը հասուն հանդիսանար այս կարեւոր խնդրի մէջ:

Ս.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ուրախութեամբ շտապում ենք ուղղել մի սխալ լուր: Մեր լրագրի № 136-ի մէջ տպւած էր Պետերբուրգից գրած մի սխալ լուր, երկու հայ ուսանողների մահվան մասին: Շտապում ենք յայտնել, որ այդ լուրը հիմնովին սուտ է, և այդպիսի տխուր դէպք բարեբաղդաբար տեղի չէ ունեցել: Իսկ թէ ինչպէս եղաւ, որ այդ սուտ լուրը լայն տեսաւ մեր լրագրի մէջ,—այդ մասին թող ընթերցողը կարդայ մեր բացատրութիւնը «Մշակի» ներկայ համարում:

Ներկայումս երբ «ժողովը» բաւական տարածված է թիֆլիսում և շատ դոճեր է տանում, աղքատները խնայող են, որ առանց այն էլ մի տեսակ թերահաւատութեամբ է վերաբերվում դէպի ծաղիկ պատուաստելը, համարեալ թէ չէ իմանում ինչ անի, երբ մեր քաղաքի բժիշկները նոյն իսկ մի այդպիսի լաւ ծանօթ հարցի մասին, ինչպէս որ ծաղիկ պատուաստելը, է, երկու տեսակ կարծիք են յայտնում: Հասարակութիւնը բժիշկներին մի մասին խոստ է, որ անպատճառ պէտք է ծաղիկ պատուաստել, քանի որ այդ հիւանդութիւնը շատ տարածված է, իսկ բժիշկներին միւս մասը պնդում է, որ այժմ, երբ էպիդեմիան գոյութիւն ունի քաղաքում, վտանգաւոր է ծաղիկ պատուաստելը, այլ պէտք է սպասել մինչև որ էպիդեմիան անցնի: Հարցնում ենք, ինչ անի հասարակութիւնը երբ բժշկական գիտութեան ներկայացուցիչները այդպիսի միմյանց միանգամայն հակասող մտքեր են յայտնում: Մենք պատմում ենք, որ դէպքեր են եղել, որ մի և նոյն բնօրինակը երկու բժիշկ է հըրաւելել այդ հարցի համար, և երկուսն էլ միմեանցից բոլորովին տարբեր կարծիք են յայտնել: Ուրեմն ինչ անի ժողովուրդը: Կարծում ենք, որ այս տեսակ վարմունք մեր քաղաքի բժիշկներին կողմից միանգամայն անհասկանալի է: Եթէ մեր գիտական բժշկական ընկերութիւնն էլ այսպիսի դէպքերում իր վճռական նշանակութիւն ունեցող կարծիքը չէ յայտնում, ապա ո՞ր օրվայ համար նա գոյութիւն ունի...

ԱՍՏԱՐԱՆԻՑ մեզ գրում են. «Սպանութիւններ այստեղ էլ պակաս չեն. մի քանի օր առաջ անյայտ չարագործները սպանել են մի հայ կնոջ, իր տան մէջ. ինչպէս երևում է նրան կողոպտելու նպատակով: Նոյն օրը մի թուրք, իր սիրուհու հետ բաղնիս գնացած լինելով, յանկարծակի մեռնում է: Չանապան կասկածներ կան այդ մասին, իսկ նոյնիման 18-ին, Մ. անունով մի հայ երիտասարդ ինքնասպանութիւն գործեց. երիտասարդը հարուստ ընտանիքից է. ինքնասպանութեան պատճառները յայտնի չեն:

Նոյնիման 22-ին, ինչպէս մեզ գրում են Դէր-ԲէնՏիճ, այդ քաղաքի հայ թատրոնատէրները ներկայացրին յօգուտ Դէր-ԲէնՏի հայոց ուսումնարանի Գ. Ստեղծակների «Էլի մէկ դոճ» պիէսին: Թատրոնը լի էր հասարակութեամբ: Մեծ բաւականութիւն տեսցին հասարակութեանը իրանց խաղով տիկին Մէլիք-Շահնազարեանց, օր. Ե. Աբրահամեանց և պ. Սողոմոնեանց:

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են: «Տեղիս գրադարանը ընթերցողները, որի մասին մի քանի անգամ գրվել է ձեր լրագրում, փակվել է արդէն Ժողովուրդը չը յաճախեց այդ հիմնարկութիւնը և նոյն իսկ այդ պատճառով գրադարանը չը կարողացաւ շարունակել իր գոյութիւնը: Այդպէս է մեր ժողովուրդը՝ անտարբեր դէպի ամեն բան, որը մտաւոր կեանքի առաջնությունն է նպատակում:

Մեզ գրում են ՇՈՒՇՈՒՑ, որ եղանակը լաւ է այժմ այդ քաղաքում, թէ և առաջին ձեռքը դեռ հոկտեմբեր ամսի վերջերին էր եկել: Մթերները թանգ են Շուշում. ցորենը թէ թանգ է և թէ փչացած է: Շրջակայ գիւղերի գրութիւնը, ինչպէս մեզ գրում են, շատ ծանր է. մի կողմից դեղաքիները ցորեն չունեն, իսկ միւս կողմից նրանք ստիպված են նոր ճանապարհի չինութեան համար բանելու:

ՆՈՐ-ՆԱՊԻՏԵԻՆԻՑ պ. Նիկողայոս Չիլիկաբեան խնդրում է մեզ տպագրել մեր լրագրում հետեւեալ նամակը: «Շնորհակալութիւն յայտնելով ձեզ ձեր համակարգի խօսքերի համար իմ երաժշտական հեղինակութեան վերաբերմամբ, որը կրում է «Армянскія Мелодіи» վերնագիրը, պարտք եմ համարում հրապարակաւ յայտնելու և իմ շնորհակալութիւնը ձեր լրագրի բաժանորդներին, որոնք չը զլացան համակրելու իմ այդ հեղինակութեան: Բարեհաճեցէք յայտարարելու, որ յիշեալ «Армянскія Мелодіи» երաժշտական գրութեան մնացած է ծախու ընդամենը 100 օրինակ, որոնցից ստացվել է եկամուտի 1/5 մասը, այսինքն 50 րուբլի, եւ պարտաւորվում եմ նուրիւր մեր անմոռանալի բանաստեղծ Բաքիի մահաբանի կառուցման գործին: Ուստի խնդրում եմ նուազաւոր հայ հասարակութեանը, որ բարեհաճի որչափ կարելի է շուտ դիմել ինձ յիշեալ հեղինակութիւնը ստանալու, նախ իմ խոստումն դէպի Բաքիի յիշատակը կատարելու համար և ապա միջոց տալու ինձ շարունակելու մեր սիրելի Բաքիայի Պատկանեանի բանաստեղծութիւնները երաժշտութեան փոխադրելու:»

Ներկայ թվականի յունվարի մէկից մինչև հունիսի 13-ը Ռուսաստանից արտասահման արտահանված հացահատիկների քանակութիւնն է 424,753,703 պուլ: Այնչափ տարի այդքան ժամանակամիջոցի ընթացքում արտահանվածը 129 միլիոն պուլով աւելի պակաս է եղել, քան թէ այս տարվանը:

Լսում ենք, որ թիֆլիսի նահանգապետ է նշանակված, հանգուցեալ Չիլիկաբեանի փոխարէն, իշխան Շերվաշիճէ, որ առաջ վարում էր փոխ-նահանգապետի պաշտօնը:

Յօդուհաններ յօդուհանների ետեւից... Այժմ Կ. Պոլսի հայոց մամուլը, նախաձեռնութեամբ «Արեւել» լրագրի, հարց է յարուցել տոնելու մեր տաղանդաւոր դերասան Պետրոս Աղամանի բեմական գործունէութեան 25-ամեայ յօդուհանը: Աղամանն առաջին անգամ բեմ է դուրս եկել Կ. Պոլսում, 1863 թվին, Վոլիլիմոս աշխարհալալ անունով ողբերգութեան մէջ, իբրեւ մի աննշան, անյայտ դերակատար, պատանի հասակում,—իսկ այսօր նա կազմում է հայոց բեմի պարծանքը: Կ. Պոլսի մամուլը հրաւեր է կարդում՝ այնտեղի

երիտասարդութեան միանալու և խորհելու, թէ ինչպէս պիտի տեսնել այն մարդու յօդուհանը, որը ամբողջ մի քառուրդ դար ծառայել է բեմին և զեղարուեստին: Թիւրքահայերի մամուլի կարծիքով Կ. Պոլսը պարտաւոր է տեսնել Աղամանի յօդուհանը, քանի որ Կ. Պոլսին է նրա ծննդավայրը, և ուրիշն տաղանդաւոր հայ դերասանի յօդուհանի տոնակալութեան գործը պէտք է զըլուխ բերի: Այդ նոյն Կ. Պոլսը Տեսնեցէ թէ ինչպէս կը կատարի իր պարտքը Բաքիի արեւելու «Գեղեցիկ» մասին ճառեր խօսող հայ երիտասարդութիւնը և հայ հասարակութիւնը...

Վերջին ժամանակներս լայն են տեսել հայոց ծխական դպրոցների համար «Լեւոնադիտութեան» մի քանի փոքրի տեսութիւններ, որոնք «Հասարակութեան» են կրում, և որոնց ճակատին տպած է, թէ կազմված են «Ժողովրդ» համեմատ: Մենք չենք էլ ուզում ուշադրութեան առնել այն բանը, թէ արդեօք «Ժողովրդ» համեմատ են կազմված այդ դասագրքերը թէ ոչ, բայց չենք կարող չը նկատել, որ այդ դասագրքերը տարածելու համար նրանց կազմողները շատ անվայել միջոցի են դիմում... Դրա վնասը ուղղակի աշակերտներին և աշակերտուհիներին վրա է ընկնում, քանի որ մի և նոյն դպրոցում, մի և նոյն դասատան մէջ երեխաներին «Լեւոնադիտութեան» մի դասագրքը դնել տալուց յետոյ, ստիպում են՝ մի կամ երկու ամսից յետոյ՝ դնել և միւս դասագրքը: Միթէ սրա կամ նրա դասագրքերը առաջացնելու համար իրաւունք կայ երեխաների ստիպելու, որ նա մի և նոյն առարկայի համար երկու դասագրքը առնի: Դա ո՞րտեղ է տեսնված և ինչ կը նշանակի...

Նոյնիման 30-ին, ուսուսաց դրամատիական թատրոնում ներկայացվեց «Բիշլի» յայտնի պիէսան դերասան Կիպիանիի ընէնֆիսին: Պ. Կիպիանի անցեալ տարի մասնակցում էր վրաց խմբին և այդ խմբի ամենալաւ ուղեւորը մէկն էր, բայց այս տարի, գոց է կամենալով աւելի առաջ դնալ, նա սկսեց մասնակցել ուսուսաց խմբի ներկայացումներին, և փայլելու ցանկութիւնը նրա մէջ այնքան մեծացաւ, որ նա վճռեց բեմ դուրս գալ նոյն իսկ Բիշլիի ծանր և պատասխանատու դերում: Այդ օրը թատրոնում հաւաքված մեծ մասամբ վրացի սակաւակիւ հասարակութիւնը, աւելի անգամաբար, քան թէ գեղատեսիլ տեսակէտից, բռնու կերպով ծափահարում էր Կիպիանիին,—բայց չէ կարելի չը նկատել, որ պ. Կիպիանի բոլորովին այն Բիշլիի չը ներկայացրեց, որը յայտնի է պատմութեան մէջ, և այնքան ազդու ու մեծ է դուրս բերված նոյն իսկ պիէսայում: Իսկ պ. Կիպիանիի արտասանութիւնը միանգամայն փչացնում էր նրա խաղը, այնպէս որ ուրիշ բան չէ մնում ասելու, բայց եթէ այն, որ շնորհալի դերասանը իր անունը կը կոտրի այդպիսի դերեր վերցնելու:

Այս օրերս թիֆլիսում յանկարծակի մահվան դէպքեր սկսել են շուտ շուտ կրկնվել: Մի քանի օր առաջ յանկարծակի մահաւ թիֆլիսի դոմայի ձայնաւոր Ստեփան Խլովրով: Հանգուցեալի կինը նրա յիշատակին հուրիւր է 1000 րուբլի բարեգործական նպատակներով: Իսկ ամսին 1-ին դիշերը, անկողնում պառկած ժամանակը, սրտի պայթումից յանկարծակի մահել է դէպտոլիտների ստիպման ժողովարանի Յովհաննէս Ամբրազովի ցանկարծական մահվան երկու ուրիշ դէպքեր էլ են պատահել, բայց այդ վերջին մեռնողները, ինչպէս սովորաբար ասում են, «աննշան մարդիկ» են եղել:

Նոյնիման 30-ին թիֆլիսի նահանգական դատարանի քաղաքացիական բաժնում քննվեց Մ. Ա. Թամաշիլի, Բագրատ Տէր-Ղուկասեանի և Գրիգոր Ռաֆայելեանի պահանջը, որով նրանք զինւորական-ինժեներական վարչութիւնից պահանջում են 135,088 րուբլի Կարօի բերդի շինութեան համար կապալով վերցրած իրանց աշխատանքների վերաբերմամբ: Նահանգական դատարանը՝ գործը լսելուց յետոյ վճռեց՝ մերժել յիշեալ անձնիքների պահանջը, և նրանցից առնել դատաստանական ծախսերը:

Այսօր, դեկտեմբերի 3-ին, օպերային թատրոնում մի կոնցերտ պիտի տրվի, մասնակցութեամբ օպերային երգիչների և երգչուհիների,

յօգուտ թիֆլիսի օրիորդական գիմնազիայի աղքատ աշակերտուհիների: Նոյն օրը ուսուսաց դրամատիական խումբը պիտի ներկայացնէ «Հանքագործարանատէր» պիէսան բանկի թատրոնում, յօգուտ առաջին գիմնազիայի աղքատ աշակերտների:

Քաղաքում ծաղիկ հիւանդութեան տարածվելու պատճառով, կառավարական շատ զուրկներին աշակերտներին ծաղիկ են պատուաստել: Այդ նախապաշտպանողական անհրաժեշտ միջոցի վրա, ինչպէս մեզ հայտնի է, են, ուշադրութիւն չեն դարձնում միայն քաղաքի հայոց դպրոցների վարչութիւնները: Յայտնի է, որ մասնաւոր հայոց ծխական դպրոցներում սովորող տղաներն ու աղջիկները պատկանում են ընդհանրապէս քաղաքի ազգաբնակչութեան աղքատ դասակարգին, և ընկալվում են դանազան յետընկած և կեղտոտ թաղերում, ուր, ի հարկէ, ծաղիկը աւելի է տարածված: Ուրեմն ինչու հայ դպրոցները այդ բանի վրա անուշադրութեամբ են նայում, փոխանակ ծաղիկը պատուաստելու, որը կարելի է անել առանց մի կօպէկ անգամ ծախսելու:

Ստացանք արմաւիրաբնակ հայ վաճառականներից 10 րուբլի յօգուտ վախճանված խմբի: Մանի որը ընտանիքի Հասցերը ուր հարկն է:

Նոյնիման 27-ից մեզ գրում են ԵՐԵՎԱՆԻՑ հետեւեալ: «Այսօր կայացաւ Կովկասեան Բարեգործական ընկերութեան Երևանի ճիւղի ժողովը: Ինչպէս լսեցինք այդ ժողովում վճռվեց հիմնել մի ընթերցարան Երևանում: Դա մի գովելի գործ է, վերջապէս Երևանը կունենայ մի ընթերցարան:

Ստացանք Պիատիգորսկից, պ. Վահան Ասկաբեանի ձեռքով, յօգուտ Բաքիի արձանի և նրա աշխատութիւնների տպագրութեան գործի՝ 22 րուբլի, որ հաւաքել են իրանց մէջ Պիատիգորսկում ընկալող հայերից ստան և մէկ հոգի:

ԵՐԵՎԱՆԻՑ մեզ գրում են նոյնիման 27-ից, որ ահա մի քանի օր է արդէն որ անընդհատ անձրևներ են գալիս Երևանում: Անձրևների պատճառով անտանելի ցեխ է գոյացել փողոցներում: Եղանակը բաւական տաք է այնու ամենայնիւ:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՈՐ ՔԱՐՏԵԶ

Ֆրանսիական մի լրագիր, այն է «France Militaire» լրագիրը, նորերս ուղարկել է դանազան խմբագրութիւններին մի նոր քարտէզ, որով այդ քարտէզի կազմողը բոլորովին ուրիշ կերպ է դասաւորում եւրոպական պետութիւնները: Այդպիսի, եթէ այսպէս կարելի է ասել, քաղաքական քարտէզների կազմը նորութիւն չէ եւրոպական դիպլոմատիական լրագրիների համար:

Մեր առաջ դրած է «France Militaire»-ի այդ քարտէզը, որը պէտք է առած, բաւական փոփոխութիւններ է մտցրել պետութիւնների սահմանների մէջ, և անկասկած քարտէզի կազմողը իր գրասենականում նստած այդ բոլորը պատրաստելով ինքն ևս համոզված է եղել, որ քարտէզը «ապագայի քարտէզ» է, եթէ մինչև իսկ ընդունենք, որ դիպլոմատ-աշխարհագետ ենթագրութիւնների գէթ մի քանի մասերը կիրաւորվեն:

Նայենք մի փոքր մօտիկից այդ քարտէզին: Քարտէզի կազմողը նոր փոփոխութիւններ մտցնելով եւրոպական պետութիւնների կազմակերպութեան մէջ՝ Էլզաս-Լօթարինգիան վերադարձնում է Ֆրանսիային:

Պէտք է խոստովանել, որ Ֆրանսիական լրագիրը Ֆրանսիայի վերաբերմամբ շատ համեստ է վարվել, եթէ յիշելու լինենք, որ նա մատիտի մի քանի գծերով ունչացնում է այնպիսի պետութիւններ, ինչպէս է Գերմանիան և Աւստրիան: Երևակայում ենք, թէ որքան դուր կը գալ այդ բանը իշխան Բիսմարկին: Գերմանիայի փոխարէն կազմակերպվում են բազմաթիւ փոքր և միմեանց հետ ոչինչ կապ չունեցող պետութիւններ, ինչպէս օրինակ, Բաւարիա, Ապենիա, Պրուսիա, Հեսսեն, Բէյնի նահանգներ, Վիրտեմբերգ, Վեստֆալիա և այլն և այլն: Դրա կողքին կազմակերպ-

վում է մի փոքրիկ բուն Գերմանական պետութիւն, Աւստրիա անուանով, որը բաղկացած պիտի լինի երեք փոքրիկ նահանգներից՝ Շտիրիայից, Զալցբուրգից և վերին ու ներքին Աւստրիայից: Իսկ այժման Աւստրիայի փոխարէն կազմակերպվում է մի նոր մեծ և անկախ պետութիւն՝ Ունգարիա, որի հովանաւորութեան տակ են տըրվում Բանիան, Հերցեգովինան, Չերնոօրիան և Ալբանիան:

Եւրոպական միւս պետութիւնները՝ Անգլիան, Պորտուգալիան, Սպանիան, Իտալիան, Շվեդիան, Նորվեգիան, Դանիան և Բելգիան մնում են իրանց նախկին դրութեան մէջ:

Բայց քաղաքական քարտեզի կազմողը՝ մեծ փոփոխութիւններ է անում Բալկանի վրա: Կ. Պոլսը տրվում է Ռուսաստանին, և բացի դրանից Ռուսաստանը նշանակվում է «Խնամակալ» Բոսնիայի, Բուլղարիայի և Սերբիայի վրա: Դրա հետ միասին արեւելեան Պրուսիան, Պոզնանը և Գալիցիան միացվում են լեհական թագաւորութեան հետ՝ և կազմվում է լեհական պետութիւն՝ նոյնպէս Ռուսաստանի խնամակալութեան ներքոյ:

Յունաստանին բոլորովին անկախ դիրք տալով՝ դրանով էլ քարտեզի կազմողը ձեռնարկում է իր քաղաքական քարտեզը, որը «France Militaire» լրագիրը, իբրև մի նորութիւն, ուղարկել է դա՛նազան լրագիրներին խմբագրութիւններին:

ԱՐՁԱԳԱՆԻ ԼՈՒՐԵՐ

—Աւստրիական առաջադիմական օրդանները խիստ կերպով յարձակվում են այն լրագիրներին վրա, որոնք միշտ աշխատում են հաւատացնել թէ պատերազմի վտանգ կայ, և այդպիսով մեծ վնաս են տալիս ազգաբնակչութեանը՝ խախտելով արդիւնաբերական և առևտրական գործողութիւններին խաղաղ ընթացքը:

—Ինչպէս երևում է, վիէննայի մի քանի լրագիրներ, իբրև թէ կառավարութեան ցանկութիւնների արտայայտիչ հանդիսանալով, շատ էլ զոհ չեն սերբիական սահմանադրութեան վերաքննութիւնից, և յայտնում են, որ այդ վերաքննութիւնը կործանիչ հետևանք կունենայ նոյն իսկ Միլան թագաւորի համար:

—Ընդհանուր ստացված տեղեկութիւններին նայելով՝ Զանգիբարում ազգաբնակչութիւնը սպասում է մեծ սովի:

—Բէլգրադից եկած վերջնական տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ վերջին ընտրութիւնների մէջ դիմադրական կուսակցութիւնը կատարեալ յաղթութիւն է տարել, և արմատականները յոյս ունեն, որ անկասկած ձայների առաւելութիւն կունենան ժողովում:

—Աւստրիական բէլսարաւում այժմ քննվում է զինուորական նոր օրինագիծ: Այդ առիթով մի քանի լրագիրներ մասնաւոր են անում Ամերիկայի երջանիկ դրութեան վրա, որը պահում է ընդամենը 25 հազար մշտական զօր:

—Վիէննայի համալսարանի ուսանողները, Ֆրանց-Յոսէֆի կայսրի յօրեկանի առիթով հակառակաբանական ցոյցեր արեցին:

—Լիւթենշտէյնի իշխանութեան մէջ շինվում է մի պալատ և եկեղեցի պապի համար: Պապը մտադիր է այդտեղ ապրել, եթէ ստիպված կը լինի հեռանալ Հռոմից:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Գերմանիայի Մէյնինդեն քաղաքում այս օրերս

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ն Ն Ե Ր

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.
ՅՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԱԳԻՆՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ն. ՊԱԿԵ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԵՒԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ. Հինգշաբթի, դեկտեմբերի 8-ին, ԱՐՄԵՆԻԱ (ARMÉNIE) շոգենավը, նաւապետ ԳԱՐՐԻԳ (GARRIGUES) զուրս կը գնայ Բաթումից դէպի Տրապիզոն, Օրդու, Սամսուն, Կ. Պոլիս և Մարսէյ: Տեղեկութիւնները մասին պէտք է զինել ընկերութեան գործակալներին. Բաթումում՝ Լէմբոլուի տան, Նաբերէժնոյա, և Թիֆլիսում՝ Նախկին Արժուրի գալլերէում, № 103.

3—3 (շ. հ. հ.)

տեղի ունցաւ մի հետաքրքիր և տարօրինակ ցուցահանդէս: Այդտեղի մի դահլիճում հանդէս դրված էին 54 լեզուներով տպված այլ և այլ լրագիրները 250 համարներ, որոնք պարունակում էին իրանց մէջ Վիէննայի I կայսրի մահի մասին յօդուածներ: Համադրուած կային լրագիրներ հետեւեալ լեզուներով. հին գալլերէն, հին գերմաներէն, բրիտոններէն, նոր գերմաներէն, ֆրանսերէն, իտալերէն, շվեդերէն, հոլանդերէն, բոսաներէն, սպանիերէն, պորտուգալիերէն, իսլանդերէն, անգլիերէն, լատիներէն, բուլղարերէն, լեւոտներէն, վենգերէն, լեհերէն, ռուսերէն, կրօստներէն, չէխերէն, սերբերէն, բուլղարերէն, էստներէն, հայերէն, վրացերէն, հին-յունարէն, նոր-յունարէն, թիւրքերէն, ուշադրերէն, ֆիններէն, արաբերէն, հրէարէն, պարսիկերէն, ալբաներէն, չինարէն, կապոններէն, հնդկական այլ և այլ բարբառներով և այլն: Այդ լրագիրները ժողովածուն գերմանական կայսրի հրամանով յատկացվեց Բերլինի Թագաւորական գրադարանին:

«Արեւել» լրագիրը հաղորդում է հետեւեալը. «Բարիդի բժշկական համալսարանին այս տարւած միակ հայ ուսումնական տնայ, պ. Գրիգոր Տէր-Գրիգորեանց, տիֆլիսցի, մայրաքաղաքս եկած է Պ. Տէր-Գրիգորեանց իւր բնակութիւնը պիտի հաստատէ ի Կ. Պոլիս»:

Նոյեմբերի 10—12-ին, Թիֆլիսցի մի երիտասարդ, Յովհաննէս Լօրիս-Միլիքեան, որ նորերս փարիզում աւարտել է իր բժշկական ուսման ընթացքը, փարիզի բժշկական դպրոցում աշոգութեամբ պաշտպանել է իր դիմադրական Ռուսաստանի հիւանդանոցների վերաբերմամբ: Պետերբուրգի «НОВОСТИ» լրագրի փարիզի թղթակիցը հաղորդում է, որ բժշկական դպրոցի խորհրդի նախագահ պրոֆէսորը, գովելով երիտասարդ բժշկի դիմադրական, այն միաջն է յայտնել, որ եթէ բոլոր օտարերկրացիները, որոնք փարիզում բժշկութեան վկայական են ստանում, տային այդպիսի բժշկական աշխատութիւններ, այն ժամանակ կարճ միջոցում ֆրանսիական բժշկական դրականութիւնը շատ կը հարստանար և նախանձելի կը դառնար:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍՏՅՈՒՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲՈՒՆԱՐԵՍ, 1 դեկտեմբերի: Այստեղ 1889 թվի յունվարի 15-ին թագուհի Նատալիան տեսակցութիւն կունենայ իր որդու հետ:

ՀՈՍԻ, 1 դեկտեմբերի: Կրկու յայտնեց պարլամենտում, որ իտալիան չէ ենթադրում նոր տիրապետութիւններ անել Ալբանիայում:

ԿԱԼԿԱԹԱ, 1 դեկտեմբերի: (Երէյտէրի) հեռագիրը Այսօր հասաւ Ագրա Մեծ Իլլիան Ալէքսանդր Միխայլովիչ իր սկիայով:

ՓԱՐԻԶ, 1 դեկտեմբերի: Գեներալ Բուլանֆէ յիտ վերցրեց իր պահանջը ապահարդանի մասին, որովհետեւ նրան բաւականութիւն տալը կարելի է համարվում:

ՍՕՖԻԱ, 1 դեկտեմբերի: Զինուորական տեսչակ շրջաններում կատարւում են զինուորական նոր կազմակերպութեան դիւրին գործադրութեան մասին, որի նպատակն է ոչ այնքան զինուորական ոյժի մեծացնելը, որքան բարձր պաշտօններ հաստատելը, որով կառավարութիւնը յոյս ունի շատացնել զօրաբանակի մէջ իր կողմնակիցների թիւը: Մի քանի ժամանակից ի վեր պալատում նախադրուած է միջոցներ են ձեռք առնվում Կորուբեան պրինցի անձնական ապահովութեան համար:

Խմբագիր-հրատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐՄՐՈՒՆԻ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ

Աղանեան՝ փոքրադիր օրացոյց	10 կօպ.
» Հարիւրով առնողներին	7 »
» Պատի օրացոյց	1 ռուբ. »
» Հանտպարհի ծախսով	1 » 25 »
Տէր-Արքայահամանի օրացոյց	15 »
» Գումարով առնողին	12 կօպ.

1—3

1889 թվին
(Ո Ւ Թ Ե Ր Ո Ր Դ Տ Ա Ր Ի)

ԱՐՁԱԳԱՆԻ

ՇԱՐԱԹԱԹԵՐՈՐ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱՎԻ ՄԻ ԵՒ ՆՈՑԵ ԳԻՐԳՈՐ ԵՒ ՊՐՕԳՐԱՄԱՅՈՎ

Տարեկան բաժանորդագին է 5 ռուբլի: Կէս տարվանը 3 ռուբլի: Թիֆլիսում ստորագրութիւն ընդունվում է Իլլիս. Բէհրուժեանի և Աբ. Յովհաննիսեանի լրագրական գործակալութեան գրասենեակում և Թիֆլիսի «Փոխադարձ վարկի ընկերութեան» մէջ, խմբագրի մօտ: Օտարաքաղաքացի դիմում են՝ Тифлисть, въ редакцію «Арцаганъ», արտասահմանից՝ Tiflis, Rédaction du journal arménien «Ardzagang»: Ազգութիւն բաժանորդագրութիւն չէ ընդունվում:

Խմբագիր-Հրատարակիչ՝ ԱՐԳՐԱՐ ԹՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

Լ Ո Յ Ս Տ Ե Ս Ա Ր

ԱՐԻՍՏՈՂՈՄ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆՏԻ

ԹՈՒՍԵՐԷՆԻՑ-ՀԱՅԵՐԷՆ ԲԱՌԴԻՐԳ

ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐ

Գինն է 3 ռուբլի, ծանապարհի ծախսը գնողի վրա է:

Միանուագ քսանից աւելի գնողին դիջումն կը լինի:

Վաճառվում է ԲԱՅԱՌԱՊԵՍ Խիդիկէի և ընկ. գրավաճառանոցում, Թիֆլիս, Գօլովինսկի Պրօպէկտ, առաջին Գիմնազիայի հանդէպ: 19—40

COMPAGNIE DES MESSAGERIES MARITIMES
PAQUEBOTS-POSTE FRANÇAIS.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԱԳԻՆՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

(ՄԵՍԱԺԵՐԻ ՄԱՐԻՏԻՄ)

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԵՒԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ. Ուրբաթ, 9/21 դեկտեմբերի, ԲԱԹՈՒՄԻՑ զուրս կը գնայ շոգենաւ. NIEMEN (ՆԻԵՄԵՆ) նաւապետ SCIPION (ՍԻՊԻՕՆ), մտնելով Կ. Պոլիս, Պորտ-ԼաՏօր և Լալպալ: Ազգէտները՝ ԲԱԹՈՒՄԻՄ պ. Գ. ԷՍՍԵՆՃԵՐ, իսկ ԹԻՖԼԻՍԻՄ ԳԵՆՐԳ ՀԵՋՈՒԲԵԱՆ 2—2

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ԵՒ ՊԱՆՍԻՕՆ

Ա. ՏԵՐ-ՅԱԿՈՎԲԵԱՆԻ

Ուսումնարանը պատրաստում է աշակերտներ՝ գիմնազիայի, ռեալական ուսումնարանի, կադէտսկի կորպուսի և այլ ուսումնարանները համար:

Պանիօնի ծրագիրը հաւասար է գիմնազիայի ստորին դասարանների ծրագրին, հաստատված բարձրագոյն իշխանութիւնից:

Աշակերտներ կընդունվեն մինչև յունվարի 10-ը: Երթևեկները վճարում են ուսման վարձ տարեկան 80 ռուբլի: Գիշերօթիկները ուսման և բոլոր ծախսերի վարձ—300 ռուբլի տարեկան: Խոնարհաբար հրաւիրում ենք ուշադրութիւնը այն բոլոր անձանց, որոնք երեկաններ ունեն պատրաստել տալու:

Հասցէն. Тифлисть. Большая Ванская улица, № 3.

4—4 (շ. հ. հ. շ.)

ВЪ ГЛАВНОМЪ СКЛА ДѢ ЖИРАРДОВСКИХЪ
МАНУ ФАКТУРЪ

ԺԻՐԱՐԴԵԱՆ ՄԱՆՈՒՖԱԿՏՈՐԻՆԵՐԻ ԳԼԽԱՒՈՐ ՊԱՆՍՏՈՒՄ

Դիօրցովայա փողոցում, նախկին Արժուրի քարվանսարայում՝ նոր ստացվել են պատրաստ ԲԵՋԵՆՏԵՐ հետեւեալ չափերի.

2 1/2 × 3, 3 × 4, 3 × 5, 3 × 6 4 × 5, 4 × 6, 5 × 7.

ԴՕՆԵՐ Կ ԼԵՑՑ

10—10

ԲԺԻՇԿ ՊՐԷՕԲՐԱԺԷՆԱԿԻ

Մանուաւորապէս բժշկում է էլէկտրականութեամբ, ֆարադական և զալվանական հոսանքով ձուլների և ոտների անդամաւորութիւնից, թէվատիլից, ներկային հիւանդութիւններից և կոնտրակտուրայից (մկանունների անդամաւորութիւն), բժշկում է կոլերին և խուլերին անդամաւորութիւնից և նոյնպէս ընդունում է կանացի հիւանդութիւններով և սիֆիլիսով տկարներին:

Հիւանդները ընդունելութիւնը ամէն օր, առաւօտեան 9 ժամից մինչև 12 ժամ և երեկոյեան 7 ժամից մինչև 8 ժամ, Միքայէլեան փողոցում, Բէկլիանովի տանը, № 103. 4—10